ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՆԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Մասնագիտությունը՝
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Որակավորումը՝
ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ
- ***Առկա***
- ***Հեռակա***

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- ***Առկա՝***
  4 տարի
- ***Հեռակա՝***
  5 տարի

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ***Մրցութային՝***
  Մ(գ), Հլգ(գ) կամ Օտլ(գ)
- ***Ոչ մրցութային՝***
  Օտլ կամ Հլգ

ՀՊՏՀ Դիմորդ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ՝

- ***Առկա՝***
  500.000 ՀՀ դրամ
- ***Հեռակա՝***
  350.000 ՀՀ դրամ

ԿՐԹԱԹՈՇԱԿ՝

- ***Սովորական՝***
  ամսական 5000 ՀՀ դրամ
- ***Գերազանցության՝***
  6050 ՀՀ դրամ
- ***Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի՝ Ա. Արզումանյանի անվան կրթաթոշակ՝ ամսական***
  20 000 ՀՀ դրամ

ՀՊՏՀ ուսանողներն ըստ տարակարգի՝ 30-70%-ի միջակայքում, օգտվում են նաև ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից, այդ թվում՝ սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, սահմանամերձ շրջաններից ուսանողները: Զեղչման տարակարգերի մասին առավել մանրամասն տես ***այստեղ****:*

Բիզնեսի ներկայիս զարգացումները պայմանավորված են նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով: Տեղեկատվական համակարգերը և տեխնոլոգիաներն ուղեկցում են ամենուր, հատկապես՝ բիզնեսի և տնտեսության կառավարման ոլորտում:

Տեղեկատվական համակարգերն անհրաժեշտ են ժամանակակից բիզնեսի և կառավարման ոլորտում նորագույն համակարգչային տեխնոլոգիաների ու տեղեկատվական համակարգերի ներդրման և կիրառման համար:



Ծրագրի շրջանավարտը կտիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի վերաբերյալ մասնագիտական ունակություններին՝ համակարգչային ցանցերի, տվյալների բազաների կազմակերպման, տվյալների վերլուծության և կիբեռանվտանգության, ինչպես նաև WEB դիզայնի և ծրագրավորման: Բակալավրական ծրագիրը ներառում է նաև տնտեսագիտական առանցքային մոդուլներ, ինչպիսիք են ընդհանուր, միկրո- և մակրոտնտեսագիտությունը, ֆինանսները, կառավարումը, մարքեթինգը, հաշվապահությունը և բիզնեսի հիմունքները: Վերջիններս անհրաժեշտ են բիզնեսի տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի հետ աշխատանքի և ներդրման գործընթացներում: